«ԳԱՎԱՌԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՎԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դասմական ակտիվ մտածողությունը և դրա ձևավորմանը նպաստող գործիքները

Աշխատության հեղինակ՝ Սուչյան Ռոզա Սիմոնի

Աշխատանքի ղեկավար՝ Զոլյան Ամալյա Մկրտչի

ԳԱՎԱՌ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն. 3
Պատմական ակտիվ մտածողությունը. 5
Պատմական ակտիվ մտածողության վեց հայեցակարգերը. 6
Սովորողների խթանումը պատմության դասերին. 10
Պատմական ակտիվ մտածողությունը զարգացնող գործիքները. 12
Եզրակացություն. 18
Օգտագործված գրականություն. 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դպրոցներում ընթացող բարեփոխումներում խիստ կարևորվում է հայրենագիտության և հասարակագիտության բնագավառների առարկաների ուսուցման դերն ու նշանակությունը մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում: Դրա նպատակը պետականամետ մտածողությամբ օժտված, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող ազնիվ, հայրենասեր, հայրենատեր և պատասխանատու քաղաքացու ձևավորումն է[1]: Այդ առումով չափազանց կարևոր է սովորողների մոտ ձևավորել պատմական ակտիվ մտածողության հմտություններ և կարողություններ:

[1] ՀՀ Կրթության, Գիտության, Մշակույթի Եվ Սպորտի նախարարի հրամանը Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայրենագիտություն» բնագավառի («Իմ հայրենիքը» 5-Րդ, «Իմ հայրենիքն ու աշխարհը» 6-րդ, «Հայոց պատմություն» 7-12-րդ դասարանների առարկաների) առարկայական չափորոշիչը հաստատելու մասին N 33-Ն, 30 մարտի 2023 թ.

Դպրոցում աշակերտները դասագրքի նյութը ընդունում են առանց քննադատության՝ որպես վերջնական ճշմարտություն, ինչը ձևավորում է նրանց աշխարհայացքը: Պատմության դասավանդման հիմնական նպատակը պետք է լինի լայն աշխարհայացք սերմանելը՝ հենց այսօրվա իրականությունը սթափ գնահատելու համար: Ինչու՞ է սա այսօր կարևոր: Երբ պատմությունը ներկայացվում է որպես աշխարհում տեղի ունեցած գլոբալ քաղաքակրթական, տնտեսական, գաղափարախոսական մակընթացությունների ու տեղատվությունների տրամաբանության լույսի ներքո, ապա փոխվում են աշխարհի, պատմության ու քաղաքականության մասին պատկերացումները, արդյունքում դրանք մարդկանց կողմից վերլուծվում են ավելի լայն ասպեկտներում:

Աշակերտների մոտ պատմական գիտելիքների յուրացման գործընթացը գիտելքի պարզ փոխանցում չէ, որում ներգրավված է միայն ուսուցիչը, այլ սովորողները պետք է նաև ակտիվորեն համագործակցեն և կոնտակտի մեջ մտնեն ուսուցչի հետ՝ բացահայտելով, քննարկելով թեմաները և վերլուծելով դրանք մտածողության օգնությամբ:

Վերը նշված խնդիրներից ելնելով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Ուսումնասիրության օբյեկտ է հանդիսանում պատմական մտածողության ձևավորման գործընթացը, իսկ ուսումնասիրության առարկան՝ պատմության դասերին պատմական մտածողության զարգացումը: Աշխատության նպատակն է նկարագրել պատմական ակտիվ մտածողությունը և ներկայացնել վերջինիս զարգացմանը նպաստող մի քանի գործիքներ:

Աշխատությունում ներկայացված պատմական ակտիվ մտածողության զարգացման մոդելը հիմնված է Սեյքսասի և Մորթոնի «Պատմական մտածողության հասկացությունների մեծ վեցնյակը» ռազմավարության վրա:

Ուսումնասիրությունների արդյունքում փորձել ենք առաջարկել պատմական ակտիվ մտածողությունը զարգացնող մի քանի

գործիքներ, որոնց կիրառությունը առավել արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը:

Cogito, ergo sum

«Մտածում եմ, հետևաբար, գոյություն ունեմ»

Ռենե Դեկարտ

Դասական ակտիվ մտածողությունը

Մտածելու տեղիք տվող այս ժամանակներում ամենաշատը մտածելու տեղիք է տալիս այն, որ մենք դեռևս չենք մտածում:

Մարտին Հայդեգեր

Բոլորը կհամաձայնեն, որ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է սովորողների մոտ ձևավորի և զարգացնի որոշակի մտածողություն: Այս մասին խոսվում է մեթոդական գրականության մեջ, կրթական ծրագրերում, ուսումնամեթոդական ձեռնարկներում: Սա հաճախ հանգեցնում է նրան, որ մտածողության զարգացումը հիմնականում ինքնաբուխ է, ինչի պատճառով սովորողների մեծ մասը պատմության դասերին սկզբնապես չի տիրապետում պատմական մտածողության տեխնիկային: Պատմական գիտելիքների համակարգված յուրացումն իրականացվում է սովորողների բազմակողմանի, ակտիվ և որոշ դեպքերում ստեղծագործական գործունեության դեպքում[2]:

Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայրենագիտություն» բնագավառի առարկայական չափորոշչի՝ սովորողների մոտ պետք է ձևավորել և զարգացնել պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը համեմատելու և մեկնաբանելու, ինչպես նաև պատմական մտածողություն և պատմությունից դասեր քաղելու կարողություններ և հմտություններ:

Մտածողությունը ճանաչողական գործընթացի բարձրագույն ձև է, որի արդյունքը նոր գիտելիքների ձեռքբերումն է: Այն միշտ կապված է պրոբլեմային իրավիճակի հետ, որում առկա խնդիրները պետք է լուծել: Պատմությունն իրենից ներկայացնում է հարցադրումների ամբողջություն: Պատմագիտությունը առաջ է քաշում անցյալի մասին որոշակի հարցեր և ուսումնասիրությունների միջոցով փորձում է գտնել դրանց պատասխանները: Հարցեր տալն ու դրանց պատասխանները գտնելն ակտիվ մտածողական աշխատանք է: Այդ պարագայում շատ ավելի արդյունավետ կլինի պատմության ուսումնառության ժամանակ կիրառել տարբեր հարցադրումներ. առաջ քաշել անցյալի մասին հարցեր և այդ հարցերին պատասխաններ տալ:

[2] Куприянова, Д. В. Формирование исторического мышления на уроках истории, Молодой ученый, 2016

Պատմական մտածողություն ասելով, նախևառաջ, հասկանում ենք սովորողի՝ տեղեկատվության հոսքից որոշակի իրադարձությունները բացահայտելու, տարբեր աղբյուրների հիման վրա իրադարձությունները նկարագրելու և իրադարձությունները սեփական տեսանկյունից մեկնաբանելու կարողությունը:

Չի կարելի միանշանակ պնդել, թե ուսումնառությունը կարող է լիարժեք պասիվ: Սովորողները մտավոր որոշակի ակտիվություն են ցուցաբերում նույնիսկ այն դեպքում, երբ պարզապես տեղեկություն են ստանում և մտովի «մշակում» այն: Բայց որքան տեղեկատվության մշակման ավելի բարդ աշխատանք խթանենք, այդքան ավելի շատ կմտածեն նրանք: Մտածելու գործառույթը կենսական դեր ունի որևէ բան իմանալու համար. «հիշողությունը մտածելու նստվածքն է»[3]:

Թեև պատմական մտածողությունը հաճախ է հիշատակվել պատմության դասավանդման ուղեցույցներում, բանավեճերում և քննարկումներում, սակայն, փաստ է, որ բավականին քիչ աշխատանք է կատարվել պատմության ուսուցման կամ ուսումնառության միջոցով զարգացնել պատմական մտածողության կամ ձևավորել կարողունակություններ (competencies): Այնինչ, պատմության դասերն անգիր անելու փոխարեն դրանք թույլ կտային սովորեցնել աշակերտներին մտածել քննադատաբար, իսկ քննադատական մտածողության կարողություններն ու հմտությունները նրանք կկիրառեին նաև պատմության դասերից դուրս:

Պատմական ակտիվ մտածողության վեց հայեցակարգերը

Տարբեր հետազոտողներ առանձնացնում են պատմական մտածողությանը նպաստող տարբեր ռազմավարություններ: Առավել տարածվածներից է Փիթեր Սեյքսասի (Peter Seixas) հայեցակարգը: Համաձայն վերջինիս մոտեցման՝ պատմական ակտիվ մտածողությունը հիմնված է վեց առանձին, սակայն միմյանց հետ հստակորեն

[3] «Պրոգրեսիվիզմ» կրթական հիմնադրամ, Գիրք պատմության ուսուցման. ԻՆՉՈՒ՞, ԻՆՉՊԵ՞Ս, Երևան, 2020

փոխկապակցված հիմնասյուների կամ ռազմավարությունների վրա: Դրանք են.

- Պատմական կարևորություն կամ իմաստ,
- Ծարունակականություն և փոփոխություն,
- Պատճառ և հետևանք,
- Պատմական տեսանկյուն կամ հեռանկար,
- Առաջնային աղբյուրների օգտագործում (պատմական վկայություն կամ ապացույց),
- Բարոյական հարթություն[4]:

Այս ռազմավարությունները միասին ձևավորում են «պատմական մտածողություն», ինչը նշանակում է պատմական իրադարձությունների և գործընթացների խորը և համակողմանի ըմբռնում՝ պատմական տեքստերի ակտիվ ներգրավվածության միջոցով:

Թոմաս Էնդրյուսը և Ֆլաների Բրրքը, հիմնվելով Սեյքսասի հայեցակարգի վրա, առաջարկում են Հինգ C-երի հայեցակարգը՝

1. փոփոխություն ժամանակի ընթացքում (change over time),
2. պատճառականություն (causality),
3. համատեքստ (context),
4. բարդություն (complexity) և
5. պատահականություն (contingency)[5]:

Պատմական կարևորությունը ներառում է այնպիսի իրադարձություններ, որոնք ժամանակի ընթացքում մեծ թվով մարդկանց համար հանգեցրել են երկարաժամկետ փոփոխություններ (օրինակ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմը):

---

4 Seixas Peter, & Morton T., The Big Six Historical Thinking Concepts, Nelson Education Ltd. Toronto, https://historicalthinking.ca/about-historical-thinking-project (2013)

[5] Andrews Th., Burke F., What does it Mean to Think Historically? URL://https://www.historians.org/research-and-publications/perspectives-onhistory/january-2007/what-does-it-mean-to-think-historically (5.04.2023).

Պատմական բաղադրյալ մտածելակերպ զարգացնելու համար շատ լավ խթան է պատմական նշանակության կամ կարևորության ուսումնասիրությունը, քանի որ մարդկանց կամ իրադարձություններին այս կամ այն նշանակությունը կամ կարևորությունը վերագրելը ոչ թե սոսկ նրանց ի բնե հատկանիշները նշելն է, այլ հավակնոտև վիճարկելի պնդում:

Շարունակականություն և փոփոխություն

Աշակերտները երբեմն պատմությունը ընկալում են որպես իրադարձությունների
ցանկ: Երբ նրանք սկսում են ընկալել պատմությունը որպես շարունակականության և փոփոխության բարդ գործընթաց, նրանք զարգացնում են անցյալի սկզբունքորեն այլ զգացողություն:

Անցյալի ցանկացած պահի շատ բաներ են կատարվել: Որոշ փոփոխություններ արագ են տեղի ունեցել, իսկ որոշ փոփոխություններ ոչ:

Շարունակությունն ու փոփոխությունը միահյուսված են. երկուսն էլ կարող են գոյություն ունենալ միասին: Ժամանակագրությունները՝ իրադարձությունների հաջորդականությունը, կարող են լավ մեկնարկային կետ լինել շարունակականությունը և փոփոխությունը հասկանալու համար: Փոփոխությունը գործընթաց է՝ տարբեր տեմպերով և օրինաչափություններով: Առաջընթացը և անկումը ժամանակի ընթացքում փոփոխության գնահատականներն են: Կախված փոփոխությունների ազդեցությունից, առաջընթացը մի ժողովրդի համար կարող է անկում լինել, մյուսի համար՝ վերելք:

Պատճառ և հետևանք

Պատմական մտածողությունը բազմաթիվ պատմական իրադարձությունների պատճառների և դրանց հետևանքների փոխհարաբերությունները բացահայտելու, վերլուծելու և գնահատելու ունակությունն է: Այն տարբերակում է երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ հեռանկարները, ինչպես նաև

զուգադիպությունները, հարաբերակցությունները և պատճառահետևանքային կապերը:

Յուրաքանչյուր պատմական իրադարձություն տեղի է ունեցել նախօրոք տեղի ունեցած մի շարք իրադարձությունների պատճառով:

Պատմական տեսանկյուն կամ հեռանկար

Տեսանկյունը այն «տեսակետն» է, որից աղբյուր ստեղծողը նկարագրել է պատմական իրադարձությունները: Իրադարձությունների՝ սեփական տեսանկյունից նկարագրելու ցայտուն օրինակ է «Բաժակը կիսով չափ լիքն է մեկի, կիսով չափ դատարկ՝ մյուսի համար» արտահայտությունը:

Յուրաքանչյուր մարդ տարբեր կերպ է տեսնում և հասկանում իրադարձությունները՝ կախված իր տարիքից, սեռից, սոցիալական դիրքից, համոզմունքներից և արժեքներից: Նույնիսկ ժամանակակից պատմաբաններն ունեն իրենց տեսակետները, որոնք կարող են ազդել, թե ինչպես են նրանք մեկնաբանում անցյալը:

Տեսանկյունը մի հայացք է, որը սահմանափակված է այն դիրքորոշմամբ, որն արտահայտում է դրա կրողը: Սա, անշուշտ, վերաբերում է ինչպես պատմաբանին, այնպես էլ սկզբնաղբյուրներ ստեղծողներին (պատմական իրադարձությունների մասնակիցներ, ականատեսներ, ժամանակագիրներ, պաշտոնյաներ և տեղեկատվությունը հավաքողներ)[6]:

Պատմական տեսանկյունից դիտարկելը նշանակում է հասկանալ սոցիալական, մշակութային, ինտելեկտուալ և զգացմունքային միջավայրերը, որոնք ձևավորել են անցյալում մարդկանց կյանքն ու գործողությունները:

Առաջնային աղբյուրների օգտագործում (պատմական վկայություն կամ ապացույց)

Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ և հետաքրքիր դարձնելու տեսանկյունից: Սկզբնաղբյուրներում մշտապես առկա են

[6] Արտալ ինգՌ , Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը, ուսուցչի ձեռնարկ, Եվրոպայի խորհուրդ, 2003, էջ 23

տարաձայնություններ, հակասություններ տարբեր իրադարձությունների ու խնդիրների շուրջ: Այդ հանգամանքը սկզբնաղբյուրը դարձնում է կրթության գործընթացը և պատմական մծածողությունը խթանող միջոց: Մասնավորապես, սկզբնաղբյուրների հետ աշխատանքը հնարավորություն է տալիս սովորողներին ոչ միայն տեղեկացնելու հակասությունների և տարաձայնությունների մասին, այլև նրանց մասնակից դարձնելու դրանց քննարկմանը:

Սկզբնաղբյուրներ են համարվում նկարները, լուսանկարները, նամակները, թերթային և գիտական հոդվածները, իրերը, պատմական, իրավական փաստաթղթերը, գրական ստեղծագործությունները և այլն:

Բարոյական (էթիկական) հարթություն

Պատմություն ուսումնասիրելիս հաճախ է տրվում այն հարցը, արդյոք տեղի ունեցածը ճիշտ և արդարացի է: Անցյալն ուսումնասիրելիս պատմաբանները պարզապես չեն նկարագրում տեղի ունեցածը, նրանք նաև հաշվի են առնում, թե արդյոք գործողություններն ու որոշումներն արդար էին, թե անարդար:

Էթիկական դատողությունները վերաբերում են մարդկանց գործողություններին կամ որոշումների ազդեցությանը: Քանի որ պատմությունն ուսումնասիրում է մարդկային գործողություններ, այն անխուսափելիորեն առաջ է քաշում էթիկական հարցեր: Մարդկանց կամ նրանց գործողությունները չենք կարող ուսումնասիրել նույն «զգայական չեզոքությամբ», որով ուսումնասիրում ենք ֆիզիկական աշխարհագրություն[7]: Անցյալի դերակատարների գործողությունները կարելի է գնահատել միայն դրանք իրենց համատեքստում տեղակայելուց հետո՝ բացահայտելով դրդապատճառները և պատմական կոնտեքստը: Ծարժառիթը պատճառ է, որ մարդն ունեցել է որոշակի ձևով մտածելու կամ գործելու համար: Որոշ համոզմունքներ դրդել են մարդկանց փոխել աշխարհը դեպի լավը թե վատը:

[7] «Պրոտեգամա» կրթական հիմնադրամ, Գիրք պատմության ուսուցման. ԻՆՉՈՒ՞, ԻՆՉՊԵ՞Ս, Երևան, 2020, էջ 27

Սովորողների խթանումը պատմության դասերին

Պատմական ակտիվ մտածողություն զարգացնելու համար շատ կարևոր է գործոն են սովորողների ուշադրության կենտրոնացումը և հետաքրքրվածությունը: Երբ սովորողը արտաքին աշխարհից տեղեկատվություն է ստանում, այն սկզբնապես առնչվում է կարճաժամկետկամ աշխատանքային հիշողությանը: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու արդյունավետ գործունեության կարևոր ռեսուրսներից մեկը[8]: Դասերին ուսուցիչը կարող է կիրառել որոշակի «խայծեր», որոնց օգնությամբ սովորողները ակտիվորեն կներգրավվեն, կկենտրոնացնեն ուշադրությունը և ինքնուրույն կփորձեն գտնել իրենց հուզող հարցերի պատասխանները: Դրանք ակտիվացնում են սովորողների հիշողությունը, պարզում թեմայի մասին նրանց ունեցած գիտելիքները, շահագրգռում և բարձրացնում են յուրաքանչյուր աշակերտի մասնակցությունը, ինչպես նաև խթանում են սովորողների՝ ավելին իմանալու ձգտումը[9]: Ստորև առաջարկում ենք դասի խայծերի մի քանի օրինակներ.

1. Այս օրը պատմության մեջ

Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է ուսումնասիրել պատմական իրադարձություն, որը տեղի է ունեցել որևէ օր: Աշակերտը դասարանում կներկայացնի իր հետազոտությունը, մինչդեռ ուսուցիչը կարող է «օգտագործել» տվյալ իրադարձությունը՝ ընդլայնելու պատմությունը կամ, հնարավորության դեպքում, կապելու այն այդ օրվա դասի թեմայի հետ: Մյուս աշակերտներին խրախուսվում է արտահայտել իրենց մտքերը: Գործողությունը չպետք է տևի 3-5 րոպեից ավելի:

Օրինակ՝ օգոստոսի 11-Հայկի ու Բելի ճակատամարտ, հոկտեմբերի 6-Տիգրանակերտի ճակատամարտև այլն):

---

[8] Խաչատրյան Ա., Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամ, Հայաստան, Երևան, 2020, էջ

[9] Ատրգայան Ա., Ամլոյան Ա., Հայոց պատմություն, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Զանգակ, 2013, էջ 28

2. Արագ դիտում

Ուսուցիչը երկու րոպեով ցուցադրում է նկար, որպեսզի աշակերտները ուսումնասիրեն այն, այնուհետև խնդրում է նրանց կարծիք հայտնել դրա մասին: Ուսուցիչը կարող է նաև կամավորներին խնդրել գրատախտակին գրել հիմնաբառեր, որոնք կօգտագործվեն քննարկման ժամանակ:

Օրինակ՝ պատկերում Արտաշես Ի-ի սահմանաքարն է: Ուսուցիչը կարող է տալ հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է պատկերված նկարում:
- Ի՞նչ նպատակով են այն օգտագործել:

3.Տարօրինակին դուրս հանեք

Ուսուցիչը ցուցադրում է բառաշարքեր, որոնցից յուրաքանչյուրում մեկ բառ կամ անուն «ավելորդ» է:

Օրինակ՝

Իշպուինի, Մենուա, Արգիշթի, Խալդի

Վանալիճ, Սևանալիճ, Կասպիցլիճ, Ուրմիալիճ

4.Գուշակիր ով, գուշակիր ինչ

Ուսուցիչը թեմայի շրջանակներում հուշումներ է տալիս անձանց, իրադարձությունների, վայրերի և այլնի մասին: Աշակերտները կռահում են պատասխանները:

Օրինակ՝ Նա իր տերության մեջ ընդգրկեց Արարատյան դաշտը, Սևանա լճի ափամերձ շրջանները, արևմուտքում՝ Եփրատի հովիտը, հյուսիսում՝ Ծիրակը և Ջավախքը: Ո՞վ է նա:

5.Մտագրոհ և սարդոստայն

Որպես նախապայման՝ ուսուցիչը նախքան հանդիպումը պետք է հանձնարարի հետազոտական տնային աշխատանք: Դասի սկզբում ուսուցիչը գրատախտակին կնկարի սարդոստայնի ձևով դիագրամ, որը աշակերտները կլրացնեն հիմնական տերմիններով կամ գաղափարներով՝ հիմնվելով տնային աշխատանքի վրա: Քննարկման ավարտին վերադառնում են դիագրամին և վերլուծում, թե որ գաղափարներն են արդարացված կամ որոնք ավելի շատ բացատրության կարիք ունեն:

6.Եզրակացություն

Քննարկումը ուսուցիչը սկսում է՝ ցուցադրելով թեմային առնչվող որևէ նկար կամ անելով պնդում և խնդրում է աշակերտներին ներկայացնել աղբյուրի իրենց սեփական մեկնաբանությունը: Այնուհետև ուսուցիչը կարող է սկսել դասը՝ հիմնվելով ամենամոտ եզրակացության վրա:

Օրինակ՝

- Բոլոր մեծ տերությունները վաղ թե ուշ կործանվում են:
- Մեկ թագավորը կարող է իր կառավարման շրջանում հզորացնել երկիրը կամ՝ հակառակը:

7. *Առեղծվածների արկղ*

Ուսուցիչը գրում է հարցեր թեմայի վերաբերյալ և դրանք դնում արկղի մեջ: Աշակերտներից մի քանիսը մոտենում են և վերցնում մեկ հարց ու փորձում պատասխանել հարցին: Ուսուցիչը հարցերի միջոցով սկսում է ներկայացնել այդ օրվանոր թեման:

Պատմական ակտիվ մտածողությունը զարգացնող գործիքները

Գործիք 1. Պատմական կարևորություն՝ ՆԿՀԱ

Որպեսզի որոշենք, թե ինչու է ինչ-որ մեկը կամ ինչ-որ բան կարևոր պատմության մեջ, մենք պետք է դրանք չափենք որոշ չափանիշներով: Պատմական կարևորությունը հասկանալու համար շատ արդյունավետ գործիք է **«ՆԿՀԱ»**-ն.

Ն - Նորույթ

Կ - Կիրառելիություն

Հ - Հիշողություն

Ա – Ազդեցություն

Նորույթ- Հաճախ հրադարձությունները, երևույթները կարևոր են համարվում, եթե նրանք բերում են մի նոր բան, որը նախկինում

երբեք չի եղել: «Նորույթ» բառը նշանակում է «նոր, օրիգինալ կամ անսովոր լինելու որակ»:

Օրինակներ.

1. Պատճառներից մեկը, որ Հուլիոս Կեսարը կարևոր պատմական գործիչ էր համարվում անգամ իր ժամանակակիցների կողմից, այն է, որ նա առաջին հռոմեացին էր, ով հաջողությամբ ներխուժեց և նվաճեց Գալլիայի շրջանը:

2. Առաջին համաշխարհային պատերազմը համարվում էր կարևոր, քանի որ անհավատալի թվով նոր տեխնոլոգիաներ կիրառվեցին առաջին անգամ:

Կիրառելիություն- Անցյալի իրադարձությունները կարող են հանկարծակի կարևոր համարվել, քանի որ մարդիկ սկսել են հասկանալ, որ դրանք կիրառելի են նաև ներկայում տեղի ունեցող ինչ-որ գործընացի համար: Ինչպես մարդիկ հաճախ ասում են՝ «պատմությունը կրկնվում է», ինչը նշանակում է, որ երբ մեր ժամանակներում տեղի է ունենում որևէ կարևոր իրադարձություն, մենք հետ ենք նայում անցյալին՝ տեսնելու, թե ինչպես են ուրիշները վարվել նմանատիպ պարագայում:

Օրինակ՝

1. Թե ինչպես էին հին հռոմեացիները օտար ժողովուրդներին ընդգրկում իրենց կայսրության մեջ, կարող է կարևոր դառնալ, երբ փորձում ենք հասկանալ ժամանակակից ներգաղթի մտահոգությունները:

2. 1950-ականներին և 1960-ականներին ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև Սառը պատերազմի հակամարտության իրադարձությունները կարող են կարևոր համարվել, հասկանալու Ամերիկայի և Ռուսաստանի միջև ժամանակակից լարվածությունը:

Հիշողություն- Իրադարձությունները հաճախ կարևոր են դառնում, քանի որ ժամանակի ընթացքում դրանք հիշվել են որոշակի ձևով: Պատմության մեջ սովորական է, որ որոշ մարդիկ կամ իրադարձություններ տարեցտարի ավելի հայտնի են դառնում: Այս իրավիճակներում մենք հակված ենք կենտրոնանալ անձի կամ

իրադարձության մեկ կոնկրետ ասպեկտի վրա, լինի դա լավ, թե վատ, և հակված ենք անտեսելու դրա վերաբերյալ մնացած ամեն ինչ: Արդյունքում, նման բաները նշանակալի են դառնում հիմնականում այն պատճառով, թե ինչպես են մարդիկ խոսել դրանց մասին տարիներ անց:

Օրինակ՝ Հալիպոլիի ճակատամարտը համարվում է նշանակալից իրադարձություն Ավստրալիայի պատմության մեջ, քանի որ այն հիշատակվել է որպես Ավստրալիայի ազգային ինքնության ձևավորման կարևոր իրադարձություն:

Ազդեցություն- Վերջապես, իրադարձությունները հաճախ համարվում են կարևոր, քանի որ շատ մարդիկ են «տուժել» կամ «ազդվել» դրանցից: Անձի կամ իրադարձության հետևանքները կարող են լինել կամ անմիջական, կամ շարունակել ազդել ավելի շատ մարդկանց վրա օրերի, ամիսների, տարիների, տասնամյակների կամ նույնիսկ դարերի ընթացքում: Սովորաբար, որքան շատ մարդիկ են ազդվում լավ կամ վատ առումով, այնքան իրադարձությունը ավելի էական է համարվում:

Օրինակ՝ Սև մահը համարվում է կարևոր Եվրոպայի պատմության մեջ, քանի որ դրա արդյունքում մահացել է Եվրոպայի ողջ բնակչության մոտ մեկ երրորդը ընդամենը չորս տարվա ընթացքում:

Ուսուցիչը կարող է կիրառել այս գործիքը, երբ փորձում է զարգացնել աշակերտների՝ պատմական կարևորությունը գնահատելու և արժևորելու կարողությունները: Ուսուցիչը նախապես մշակում է թեմայի հարցերը: Ստորև տրված է ՆԿՀԱ գործիքի կիրառությունը «Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները» թեմայի օրինակով:

Չափանիշներ	**Պատմական կարևորության վերաբերյալ հարցերի օրինակներ**
Նորույթ Նախկինում մարդիկ ի՞նչն էին կարևոր համարում մարդու, իրադարձության կամ գաղափարի մասին: Ինչի՞ հասավ պատմական որևէ գործիչ,	**Ինչի՞ հասավ Մակեդոնացին, որը նախկինում չէր եղել:** *Մակեդոնացին ստեղծեց մինչ այդ գոյություն չունեցած հսկայածավալ մի տերություն, որը ձգվում էր Միջերկրական*

պատմական իրադարձությունը կամ գաղափարը, որը նախկինում չէր եղել:	*ծովից մինչև Հնդկական օվկիանոս:*
Կիրառելիություն Ինչպե՞ս կարող է մարդը, իրադարձությունը կամ գաղափարը առնչվել արդի իրադարձություններին: Ի՞նչ առումներով է այս մարդը, իրադարձությունը կամ գաղափարը նման ժամանակակից խնդիրներին:	**Ինչպե՞ս նակարող է առնչվել արդի իրադարձություններին:** *Նամարդկության պատմության մեջ առաջին անգամ համաշխարհայնացման սկիզբ դրեց:* *Իսկ աշխարհն այսօր անկասելիորեն հայտվել է գլոբալիզացիայի գործընթացների մեջ:*
Հիշողություն Ինչո՞ւ է այդ անձը, իրադարձությունը կամ գաղափարը քննարկվում այդ ժամանակվանից: Այս անձի, իրադարձության կամ գաղափարի ո՞ր տարրն է եղել ոգեկոչումների կամ ուշադրության կենտրոնում:	**Ինչո՞ւ են Մակեդոնացին քննարկում մինչ օրս:** **Այս անձի ո՞ր տարրն է եղել ոգեկոչումների կամ ուշադրության կենտրոնում:** *Այս պատմական անձն իր խոր հետքն է թողել ամբողջ մարդկության պատմության վրա: Նրան մինչ օրս փորձում են կրկնօրինակել, նրանից սովորում են, նրամասին լեգենդներ են հյուսել, ֆիլմեր են նկարահանում:*
Ազդեցություն Ինչպե՞ս են մարդիկ ազդվել այս անձից, իրադարձությունից կամ գաղափարից: Ի՞նչ փոխվեց այս անձի, իրադարձության կամ գաղափարի անմիջական արդյունքում:	**Ինչպե՞ս են մարդիկ ազդվել այս անձից:** **Ի՞նչ փոխվեց այս անձի, իրադարձության կամ գաղափարի անմիջական արդյունքում:** *Նրա արշավանքի ընթացքում սկսվեց երկարատև դարաշրջան, որն անվանում են հելլենիզմ (հելլենականություն): Նա պատմության մեջ առաջին անգամ փորձեց ստեղծել մեկ միաձույլ պետություն, միասնական կրոն, մշակույթ, նույնիսկ՝ ազգ («պարսկահույներ»):*

Գործիք 2. Պատմական գործչի կարևորությունը ստուգող քայլաքար

Ուսուցիչը կարող է մշակել հարցեր, որոնց պատասխանելով սովորողները ինքնուրույն եզրահանգումներ կանեն պատմական գործչի կարևորության վերաբերյալ (օրինակ՝ Արտաշես I):

Քայլ 1. Ի՞նչ գիտես այդ պատմական գործչի/ իրադարձության մասին:	Կազմիր այդ ամենի ցուցակը:
Քայլ 2. Ի՞նչ ազդեցություն է նա կամ այդ իրադարձությունը թողել այդ ժամանակաշրջանի վրա:	Գրառումներ կատարիր, թե ինչպես այդ գործիչը կամ իրադարձությունը փոփոխություններ բերեց:
Քայլ 3. Երկարաժամկետ ազդեցությունը:	Այժմ մտածիր և գրի առ, թե ինչպես այդ իրադարձությունը կամ գործիչը բերեց երկարաժամկետ փոփոխություններ:
Քայլ 4.Արդյո՞ք այդ փոփոխությունը արդիական է անգամ այսօր:	Արդյո՞ք այդ փոփոխությունը իր ազդեցությունը կամ կիրառելիությունը ակրող է ունենալ այսօր:
Քայլ 5.Եզրահանգիր:	Օգտագործելով վերոհիշյալ գաղափարները ամփոփիր, թե արդյոք այդ իրադարձությունը կամ պատմական գործիչը ունեին պատմական կարևորություն:

Գործիք 3. Եթե պատմության ընթացքում փոփոխություններ չլինեին, ապա պատմության վերաբերյալ ասելիք գրեթե չէր լինի: Պատմական փոփոխության տարբեր տեսակներ կան՝ արագ, հեղափոխական, դանդաղ, աստիճանական, անհատների և տերությունների հզորացմանը կամ անկմանը նպաստող փոփոխություններ և այլն: Փոփոխություններն ընկալելու համար պետք է հասկանալ նաև շարունակականությունը. ամեն բան միանգամից չի փոխվում: Հաճախ փոփոխությունը տեսանելի է դառնում, երբ այն համեմատում ենք շարունակականության հետ: Ստորև բերված են փոփոխությունը և

շարունակականությունը ուսումնասիրելու մի քանի պարզ հարցադրումներ.

- Ինչպիսի՞ն էր իրավիճակը մինչ այս դեպքը: Ինչպե՞ս այն փոխվեց:
- Ի՞նչն էր ակնհայտորեն տարբերվում տեղի ունեցածից հետո:
- Որո՞նք էին փոփոխությունների ուղղակի պատճառները:
- Որո՞նք էին պատճառները, որ որոշ բաներ մնացին նույնը:

Գործիք 4. Բովանդակության կիրառություն

Շարունակականություն և փոփոխություն

Գրեք այն ժամանակահատվածի անվանումը, որը դուք սովորում եք: Թվարկե՛ք բոլոր իրադարձությունները, որոնք ներկայացնում են շարունակականություն կամ փոփոխություն:

Ժամանակահատված-	
Իրադարձություններ, որոնք ներկայացնում են շարունակականություն	Իրադարձություններ, որոնք ներկայացնում են փոփոխություն

Գործիք 5. Պատճառների քննում

Այն գործոնները, որոնք ուղղակիորեն հանգեցնում են մեկ այլ իրադարձության, կոչվում են «Պատճառներ»: Որոշ պատճառներ տեղի են ունեցել իրադարձության սկսվելուց անմիջապես առաջ, մինչդեռ մյուսները ի հայտեն եկել իրադարձությունից մի քանի տարի առաջ: Պատճառները, որոնք առաջացել են իրադարձությունից ընդամենը մի քանի ժամ, օր կամ շաբաթ առաջ, կոչվում են «Կարճաժամկետ պատճառներ» Պատճառները, որոնք գոյություն են ունեցել

իրադարձությունից տարիներ, տասնամյակներ կամ դարեր առաջ, կոչվում են «Երկարաժամկետ պատճառներ»:

Պատճառները գնահատելու օրինակելի հարցեր.

- Ինչո՞ւ է տեղի ունեցել քննվող իրադարձությունը:
- Նախկինում ո՞ր իրադարձություններն էին առանցքային նշանակություն ունեցող իրադարձության քննության համար:
- Ի՞նչն է դրդել մարդկանց մասնակցել այս իրադարձությանը:
- Որո՞նք էին տնտեսական, քաղաքական, ռազմական կամ սոցիալական պատճառները, որոնք հանգեցրին այս իրադարձությանը:

Գործիք 6. Հետևանքների քննում

Յուրաքանչյուր պատմական իրադարձություն իր ազդեցությունն է ունենում դրանից հետո տեղի ունեցող իրադարձությունների վրա: Հետազոտվող իրադարձության պատճառով տեղի ունեցած իրադարձությունները կոչվում են «Հետևանքներ»:

Նման հետևանքները կարող են ներառել ազդեցություն մարդկանց, հասարակությունների, համոզմունքների կամ պատմության որևէ այլ կողմի վրա:

Հետևանքները, որոնք տեղի են ունեցել իրադարձությունից ընդամենը մի քանի ժամ, օր կամ շաբաթ հետո, կոչվում են «կարճաժամկետ հետևանքներ»:

Իրադարձությունից տարիներ, տասնամյակներ կամ դարեր անց տեղի ունեցած հետևանքները կոչվում են «երկարաժամկետ հետևանքներ»:

Հետևանքների հարցեր

Հետևանքները գնահատելու օրինակելի հարցեր.

- Հետագա ո՞ր իրադարձություններն էին քննվող իրադարձության անմիջական արդյունքը:
- Ի՞նչ փոխվեց հասարակության մեջ անցյալ իրադարձության արդյունքում:

- Ի՞նչ տնտեսական, քաղաքական, ռազմական կամ սոցիալական



փոփոխություններ եղան այս իրադարձության արդյունքում:

Եզրակացություն

Պատմական ակտիվ մտածողությունն օգնում է սովորողներին անցյալի մասին գիտելիք և ընկալում ձևավորել, ինչպես նաև ինքնուրույն հասկանալ, թե ինչ գիտեն իրենք այդ անցյալի մասին: Շատ կարևոր է, որ ուսումնառության ընթացքում սովորողները ոչ թե դասը և դասագիրքը ընկալեն որպես պատրատսի և միակ ճշմարտություն, այլ քննադատական և վերլուծական ինքնուրույն աշխատանք տանելով հանգեն դրան: Այդ պարագայում անհարժեշտ է պատմական դեմքերի, իրադարձությունների, երևույթների նկատմամբ ցուցաբերել նոր մոտեցում՝ բացահայտելով դրանց պատճառները և հետևանքները, փոփոխությունը և շարունակականությունը, պատմական կարևորությունը, ուսումնասիրել դրանք բարոյական հարթությունից, սկզբնաղբյուրն ստեղծողի տեսանկյունից և այլն:

Պատմական ակտիվ մտածողությունը նպաստում է հանրակրթության նոր չափորոշիչների հիմքում դրված գրեթե բոլոր կարողունակությունների զարգացմանը:

Աշխատությունում առաջարկվող գործիքների կիրառությունը էականորեն հեշտացնում է սովորողների մոտ պատմական մտածողության ձևավորման գործընթացը, բարձրացնում է մոտիվացիան և առաջացնում է հետաքրքրություն պատմության նկատմամբ: Վերջիններս պատմությունն ընկալում են արդեն ոչ թե սոսկ թվերի և փաստերի անվերջանալի շարան, այլ՝ կենդանի, ներկայի հետ բազմաթիվ կապերով կապված: Այս ամենի արդյունքնում անձը մարդուց վերածվում է անհատի և գիտակցում իր տեղը սերունդների հերթափոխում՝ խորապես ըմբռնելով իր՝ որպես պատասխանատու քաղաքացու գոյության իմաստը:

Ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ պատմական ակտիվ մտածողությունը օգնում է ընդլայնել սովորողների աշխարհայացքը, ամբողջացնել արժեքային համակարգը, ձևավորել ազգային ու համամարդկային արժեքներ կրող, սոցիալ ապես ակտիվ, պատասխանատու և պահանջատեր քաղաքացի:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Կրթության, Գիտության, Մշակույթի Եվ Սպորտի նախարարի հրամանը Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայրենագիտություն» բնագավառի («Իմ հայրենիքը» 5-րդ, «Իմ հայրենիքն ու աշխարհը» 6-րդ, «Հայոց պատմություն» 7-12-րդ դասարանների առարկաների) առարկայական չափորոշիչը հաստատելու մասին N 33-Ն, 30 մարտի 2023 թ.
2. «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, Գիրք պատմության ուսուցման. ինչու՞, ինչպե՞ս, Երևան, 2020

3. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, Երևան, 2020

4. Սարգսյան Ա., Մալոյան Ա., Հայոց պատմություն, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Զանգակ, 2013

5. Ստրադլինգ Ռ., Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը, ուսուցչի ձեռնարկ, Եվրոպայի Խորհուրդ, 2003

6. Куприянова, Д. В. Формирование исторического мышления на уроках истории, Молодой ученый,2016

7. Andrews Th., Burke F., What does it Mean to Think Historically? URL://https://www.historians.org/research-and-publications/perspectives-onhistory/january-2007/what-does-it-mean-to-think-historically (5.04.2023)

8. Seixas Peter, & Morton T., The Big Six Historical Thinking Concepts, Nelson Education Ltd. Toronto, https://historicalthinking.ca/about-historical-thinking-project (2013)